ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցման նախագծային տեխնոլոգիայի կիրառությունը հասարակագիտության դասաժամերին

ԱՌԱՐԿԱ՝ Հասարակագիտություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Արմեն Սարգսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սպանդարյանի միջն դպրոց ՊՈԱԿ

ՂԵԿԱՎԱՐ՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2023

Բովանդակություն

1. Ներածություն……3-4
ԳԼՈՒԽ 1
Նախագծային մեթոդի էությունը----------5-6
Ուսուցման նախագծային տեխնոլոգիայի կիրառությունը հասարակագիտության դասաժամերին…….....…----------6-14
ԳԼՈՒԽ 2
Նախագծային աշխատանքի օրինակ «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի դասավանդման շրջանակներում……..----------15-18
2. Եզրակացություն……-19
3. Գրականության ցանկ…….----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հասարակագիտությունը լուրջ առաքելություն ունի քաղաքացիական դաստիարակության, քաղաքացու ձևավորման գործում: Հասարակագիտություն առարկան սահմանում է այն հիմնական նպատակներն ու սովորողներին ներկայացվող պահանջները, որոնց իրականացմանը պետք է նպատակաուղղվի հասարակագիտության դասավանդումը: Այս առումով շատ կարևոր է դասընթացի ուսուցումը կառուցել այնպիսի մեթոդների, գնահատման ձևերի վրա, որոնք համապատասխան են սահմանված նպատակներին:

Նախագծային ուսուցման մեթոդը ուսումնաճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու ուսումնառուները: Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար: Նախագծային մեթոդն ադապտիվ է. կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այն առավել արդյունավետ է, երբ դուրս է գալիս «դասարանային» և դպրոցական մակարդակից և գնում է դեպի համայնք:

Ակնհայտ է ուսումնական մեթոդի և քաղաքացիական ակտիվության կապը. այն առավելապես երևում է այն նախագծերում, որոնց մասնակիցները փորձում են անդրադառնալ համայնքային հիմնախնդիրներին: Ուսումնառուները տեղեկանումեն, թե որտեղից են ծագում համայնքային տարատեսակ խնդիրները և պատասխանատվություն են ձեռք բերում իրենց համայնքի հանդեպ: Կոտրվում է շրջապատի հանդեպ անտարբերությունը, և տեղը գալիս է համայնքի հանդեպ սեփականության զգացումը: Ուսուցչի դերը նախագծային ուսուցման գործընթացում անչափ կարևոր է: Փոփոխվող աշխարհի և ինֆորմացիոն մեծ հոսքի պայմաններումդա մեծ մարտահրավեր է ժամանակակից ուսուցչի համար, որից լուրջ պատրաստվածություն և աշխատանքի կարևորության գիտակցություն է պահաջվում:

Նախագծային ուսուցման միջոցով ստացած ամեն գիտելիք կամ հմտություն լիովին

համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար:

Հենց այս հանգամանքներով էլ պայմանավորված է խնդրի ուսումնասիրման արդիականությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ առայսօր

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացում նախագծային աշխատանքի կիրառման վերաբերյալ մեթոդական ամբողջական աշխատանք չի կատարվել, համակարգված վերլուծության չեն ենթարկվել հասարակագիտության դասավանդման ընթացքում նախագծային ուսուցման կազմակերպան առանձնահատկությունները:

Հետազոտական աշխատանքի օբյեկտն ու առարկան: Հետազոտական աշխատանքի օբյեկտը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումն է, իսկ առարկան՝ դասավանդման գործընթացում նախագծային աշխատանքի կիրառման առանձնահատկությունների բացահայտումը:

Աշխատանքի նպատակը: Հասարակագիտության դասաժամերին նախագծային տեխնոլոգիայի կիրառության միջոցով նպաստել սովորողների պասիվ վիճակից անցում ինքնուրույն և խմբերով համատեղ աշխատանքի կատարման:

Խնդիրը: Ցույց տալ ուսուցման նախագծային մեթոդի արդիականությունը և դրա կիրառելիությունը հասարակագիտության դասաժամերին:

Հետազոտության մեթոդ- Աշխատանքում որպես մեթոդական հիմք հիմնականում օգտագործվել են նկարագրական, համեմատական, տիպաբանական, վերլուծության ու փորձի մեթոդները:

ԳԼՈՒԽ 1

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծային մեթոդ: Խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով (պրոֆ. Եվ. Ս. Պոլատ)։ Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով։ Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով։

Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն։ Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր։ Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը։

Նախագծային մեթոդը ուսուցման միջոց է, որը 18-րդ դարում ներդրվել է Եվրոպայում ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ուսման ընթացքում սովորած հմտություններն ու գիտելիքները, երբ պետք է լուծեին օրինակ, հուշարձանի նախագծման խնդիրներ[1]։

Դեռևս 20-րդ դարի առաջին կեսին Ջոն Դյուիի կողմից պրագմատիկ մանկավարժության հիման վրա մշակված նախագծերի մեթոդը հատկապես կարևորվում է ժամանակակից տեղեկատվական հասարակությունում։

Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ։ Այն կիրառվել է ավելի վաղ, քան ամերիկյան ուսուցիչ Ուիլյամ Հերդ Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» (1918) հայտնի

հոդվածի հրապարակումը[2] , որտեղ նա այդ հայեցակարգը սահմանեց որպես «սրտից կատարված ծրագիր»: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել Համացանցում՝ գտնվելով տարբեր տարածաշրջաններում: Ընդ որում, ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը: Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

Ոչ ոք չի առարկի, որ մենք ապրում ենք այնպիսի դարաշրջանում, որի փոփոխությունների թափն ու արագությունը անընդհատ աճում են: Փոխվում է ոչ միայն աշխարհը, այլեւ նրա մասին մեր պատկերացումները: Դրա հետ մեկտեղ, շատ հաճախ չենք հասցնում ժամանակին գիտակցել այդ փոփոխությունների գործընթացի ամբողջ խորությունն ու էությունը, ինչն էլ մեզ ստիպում է նահանջել, զիջել դիրքերը մրցակցության պայքարում: Այս գործընթացները պահանջում են քաղաքացիական այնպիսի որակների դաստիարակում, ինչպիսիք են սեփական իրավունքների ու պարտականությունների գիտակցումն ու իրականացումը, դրական մասնակցությունն առաջնորդություն: 21-րդ դարի քաղաքացիներն իրենք պետք է լինեն սեփական կրթության պատասխանատուն, պետք է կարողանան դնել համապատասխան նպատակներ և հասնել դրանց, ի վիճակի լինեն արժևորել իրենց տեղն ու դերը հասարակության մեջ: Այս նպատակներին հասնելու տեսնակյունից անգերազանցելի է հասարակագիտության կրթական նշանակությունը:

Հասարակագիտություն առարկան դասավանդվում է 8-րդ դասարանում և ավարտվում՝ 12-րդ դասարանում: Նոր չափորոշչով նախատեսվում է առարկայի դասվանդումը սկսել 7-րդ դասարանից և նպատակ է դրվել ստեղծել պայմաններ երեխաների աստիճանական ինքնուրույնության զարգացման, ստեղծագործական ներուժի ակտիվացման, կարողությունների բացահայտման և յուրաքանչյուր երեխայի

կրթության անհատական ուղու ստեղծման համար: Պահանջվող որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է ուսուցման նորագույն մեթոդների կիրառումով: Գաղտնիք չէ, որ ուսուցման ավանդական մեթոդները, ավելի ճիշտ՝ գիտելիքներ սերտել տալու մեթոդներն այսօր չեն կարող ապահովել ուսման որակ և ստեղծարար կարողությունների զարգացում: Դասավանդողներն այսօր ուսուցման մեթոդների ընտրության մեծ հնարավորություններ ունեն: Խնդիրն այն է, թե մենք որքանով ենք տիրապետում ուսուցման ժամանակակից մեթոդներին, ուսուցման նպատակով մեր կողմից ընտրված կամ արդեն կիրառվող մեթոդները որքանով են համապատասխանում մեր դասավանդած առարկաների ուսումնական նպատակներին: Յուրաքանչյուր մեթոդ, որը կարող է նպաստել սովորողի կողմից գիտելիքներ յուրացնելուն, հմտություններ ձևավորելուն, ինքնին արժեքավոր է: Այս առումով շատ արժեքավոր է ուսուցման նախագծային մեթոդը:

Նախագծերի մեթոդը իր նշականությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, այն 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսուցման գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում, տեխնոլոգիա է, որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ: Նախագծային մեթոդի առանձնահատկություններն են՝ ուսուցողական, որոնողական, ճանաչողական, ստեղծագործական, նորամուծական, գործնական, զարգացման ուղղվածության, անձնակենտրոն: Նախագծերն իրականացնելիս ուսումնառությունը պետք է կազմակերպվի սովորողների նպատակային գործունեության միջոցով, ընդգծվի սովորողների կապը կյանքի հետ, ուսումնասիրության հիմնախնդիրները լինեն իրական կյանքից: Այս դեպքում անպայման կապահովվեն սովորողների հմտությունների, կարողությունների զարգացումը, տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու, քննադատական մտածողության զարգացումը: Նախագծային մեթոդի կիրառման ժամանակ ի հայտ են գալիս դժվարություններ՝ պայմանավորված աշխատանքի ընթացքում միջառարկայական կապերին վերաբերող գիտելիքների օգտագործման անհրաժեշտությամբ: Այս խնդիրը հեշտ է լուծվում, եթե նախագծային աշխատանքների բաժանումը կատարելիս ուղղորդվենք

նախագծի իրականացման համար անհրաժեշտ այլ առարկաներից սովորողների պատրաստվածության հաշվառմամբ: Իհարկե, միայն նախագծային մեթոդի կիրառմամբ չեն լուծվում հասարակագիտություն առարկայի դասավանդման խնդիրները, այնուհանդերձ փորձն ապացուցում է, որ նախագծային մեթոդը իրագործելու դեպքում սովորողները կարողանում են աշխատել ընկերների հետ, կոնկրետ այս կամ այն հիմնախնդիրը լուծելու համար կիրառել տարբեր ոլորտներից ձեռք բերած իրենց գիտելիքները:

«Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել ժողովրդավարության հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մասնակցող և սոցիալապես պատասխանատու քաղաքացի:

«Հասարակագիտություն» առարկան սովորողին հասարակական գործընթացներն ուսումնասիրելու, դրանց մասին քննադատական մոտեցում ձևավորելու և սեփական դիրքորոշում ունենալու հնարավորություն է տալիս: Սովորողը պետք է կարողանա գիտականորեն ընկալել մարդու և հասարակության հիմնահարցերը, քաղաքական կարգերն ու գաղափարները, կայուն զարգացման հակասությունները, հետազոտել և մեկնաբանել դրանք, տիրապետել ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների, իրազեկ լինել տեղական, ազգային և համաշխարհային հիմնախնդիրներին՝ հենվելով ազգային ու համամարդկային արժեքների վրա: Գաղափարական նման մոտեցումը միտված զարգացնել սովորողի միտքը, խթանել վերլուծական և քննադատական մտածողությունը:

Ժողովրդավարությանը ձգտող հասարակություններումկրթությունը պետք է միտված լինի տալ գիտելիք, հմտություն և փորձառություն, որոնք էլ իրենց հերթին միտված են տարածել ժողովրդավարական արժեքներ: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է ստեղծել կրթական միջավայր, որը կամրապնդի սովորողի՝ իր ուժերի նկատմամբ հավատը՝ միևնույն ժամանակ անհատներին հնարավորություն տալով ազատորեն արտահայտնել իրենց կարծիքը: Հասարակության և անհատի միջև հավասարակշռությունը պետք է հաստատվի անհատի համար ապահով միջավայրում, որտեղ գոյություն ունեն հնարավորություններ զարգացնել «ես», «նա» և «մենք» գաղափարները: Սա էլ կուղղորդի միջանձնային հարաբերությունների

զարգացմանը և անհատների միջև համագործակցության խթանմանը:

Վերոնշված գաղափարին հասնելուն անհատի ձևավորման համար անհրաժեշտ է փոխել ՀՀ-ում կրթական փիլիսոփայությունը՝ սովորողին դարձնելով կրթական փորձառության սուբյեկտ՝ օբյեկտի փոխարեն : Յուրաքանչյուր սովորողի անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես գիտելիք ստացողի, այլ նաև գիտելիք տվողի: Այսպիսով, կրթությունը կարող է դառնալ մի շղթա, որտեղ սովորողին կտրվեն գործիքներ գիտելիքը բացահայտելու և կիրառելու համար՝ ձեռք բերելով հմտություններ և փորձառություն: Այսպիսի շղթայում դպրոցներն հսակայական դեր են խաղում՝ հանդիսանալով հենց այն ապահով միջավայրը, որտեղ յուրաքանչյուր աշակերտ ունի բոլոր հնարավորությունները ստանալու և փորձարկելու իր համար նախատեսված գիտելիքի բաժինը: Դպրոցում սովորելու ընթացքում երեխաները ոչ միայն պետք է գիտելիքներ ձեռք բերեն, այլև առավելագույնս զարգացնեն իրենց կարողությունները: Ուսուցման գործընթացն ակտիվացնելու, նրա արդյունավետությունը բարձրացնելու, սովորողների ինքնուրույնությունն ու ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու լավագույն մեթոդ է նախագծային հետազոտական ուսուցումը:

Հետազոտական գործունեությունը ինքնուրույն գործունեություն է, բայց ուսուցիչը կարող է կառավարել դրսևորման և դժվարությունների հաղթահարման գործընթացը, կանխատեսել դրանց տեսքը և, հետևաբար, ակտիվացնել աշխարհայացքային դիրքերը ուսումնական գործընթացում:

Հետազոտել նշանակում է տեսնել այն, ինչ բոլորը տեսել են, բայց մտածել այնպես, որ ոչ ոք չի մտածել: Դպրոցական շրջանավարտը պետք է հարմարվի կյանքի փոփոխվող իրավիճակներին, ինքնուրույն մտածի քննադատաբար, լինի շփվող տարբեր հարցերում: Դպրոցը պետք է պայմաններ ստեղծի աշակերտների մոտ ժամանակակից առանցքային իրավասությունների ձևավորման համար՝ ընդհանուր գիտական, տեղեկատվական, ճանաչողական, հաղորդակցական[3]: Տարբեր ոլորտներում նպատակներին հասնելու համար ժամանակակից մեթոդներից և տեխնոլոգիաներից ամենահամարժեքը նախագծերի մեթոդն է:

Նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողների ճանաչողական հմտությունների զարգացումը, նրանց գիտելիքները ինքնուրույն կառուցելու և տեղեկատվական տարածքում նավարկելու կարողությունը, ստեղծագործական

մտածողության զարգացումը: Աշակերտը դառնում է ուսուցման ակտիվ, հետաքրքրված, հավասար մասնակից: Նա ունի ստանդարտ մտածողությունից շեղում, գործողությունների կարծրատիպ, որը թույլ է տալիս զարգացնել սովորելու ցանկությունը: Դասարանում և դասերից հետո նման աշխատանքը դաստիարակչական և զարգացնող մեծ արժեք ունի: Նախագծային մեթոդը ուսուցչին տալիս է ամենալայն հնարավորությունները՝ փոխելու կրթական գործունեության բովանդակության ավանդական մոտեցումները ձևերի և մեթոդների նկատմամբ՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ողջ համակարգըհասցնելով որակապես նոր մակարդակի: Այն կարող է օգտագործվել ուսուցման ցանկացած փուլում, տարբեր տարիքի, կարողությունների սովորողների հետ աշխատելիս և տարբեր աստիճանի բարդության նյութի ուսումնասիրության ժամանակ:

Նախագծային գործունեությունը գործունեություն է, որն ուղղված է որևէ կոնկրետ ծրագրի իրականացմանը:

Ծրագրի գործողությունները ներառում են.

- Խնդրի վերլուծություն,
- Նպատակների սահմանում,
- Դրան հասնելու միջոցների ընտրություն,
- Տեղեկատվության որոնում, մշակում և վերլուծություն,
- Ստացված արդյունքների և եզրակացությունների գնահատում:

Սովորողների նախագծային գործունեությունը նաև զարգացնող կրթության մեթոդներից է, այն ուղղված է ինքնուրույն հետազոտական հմտությունների զարգացմանը, օգնում է զարգացնել ստեղծագործական կարողությունները և տրամաբանական մտածողությունը, համատեղում է ուսումնական գործընթացում ձեռք բերված գիտելիքները և ուղղում կենսական խնդիրների լուծմանը[4]:

Նախագծային գործունեության նպատակը սովորողների կողմից տարբեր առարկաների ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված հմտությունների, կարողությունների և գիտելիքների իմացությունն ու կիրառումն է:

Ծրագրի գործունեության խնդիրներն են.

- պլանավորել սովորելը (աշակերտը պետք է կարողանա հստակ սահմանել

նպատակը, նկարագրել նպատակին հասնելու հիմնական քայլերը, կենտրոնանալ աշխատանքի ընթացքում՝ նպատակին հասնելու համար),

- տեղեկատվության, նյութերի հավաքագրման և մշակման հմտությունների ձևավորում (աշակերտը պետք է կարողանա ընտրել համապատասխան տեղեկատվություն և ճիշտ օգտագործել այն),
- վերլուծելու ունակություն (ստեղծագործական և քննադատական մտածողություն),
- գրավոր հաշվետվություն գրելու կարողություն (աշակերտը պետք է կարողանա կազմել աշխատանքային պլան, հստակ ներկայացնել տեղեկատվությունը, ըմբռնել մատենագրությունը),
- աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում(աշակերտը պետք է դրսևորի նախաձեռնողականություն, ոգևորություն, աշխատի սահմանված աշխատանքային պլանին և ժամանակացույցին համապատասխան, աշխատանքը ավարտել ժամանակին),
- պահպանի ծրագրի գործունեության կազմակերպման սկզբունքները,
- ծրագիրը պետք է լինի իրագործելի,
- ստեղծել անհրաժեշտ պայմաններ նախագծի հաջող իրականացման համար,
- նախապատրաստել ուսանողներին նախագծերի իրականացմանը
- ապահովել ուսուցիչների կողմից նախագծի կառավարում - ընտրված թեմայի քննարկում, աշխատանքային պլան

Աշակերտի համար նախագիծը հնարավորություն է առավելագույնի հասցնելու իր ստեղծագործական ներուժը: Սա գործունեություն է, որը թույլ է տալիս արտահայտվել անձամբ կամ խմբով, փորձել ուժերը, կիրառել գիտելիքները, մեծ փոփոխություններ կատարել, ցույց տալ հրապարակայնորեն ձեռք բերված արդյունքը: Սա մի կարևոր խնդրի լուծմանն ուղղված գործունեություն է, որը ձևակերպել են իրենք՝ աշակերտները: Այս գործունեության արդյունքը խնդրի լուծման բացահայտված ճանապարհն է, որը գործնական և նշանակալից է հենց հայտնաբերողների համար: Իսկ ուսուցչի համար կրթական նախագիծը զարգացման, վերապատրաստման և կրթության միավորող դիդակտիկ գործիք է, որը թույլ է տալիս

զարգացնել նախագծման հմտություններ և կարողություններ՝ խնդրի վեր հանում, նպատակների սահմանում, գործունեության պլանավորում, արտացոլում և ինքնաներկայացում, ինչպես նաև տեղեկատվության որոնում, ակադեմիական գիտելիքների գործնական կիրառում, հետազոտական և ստեղծագործական գործունեություն: Եթե նախագիծը խմբային է, ապա յուրաքանչյուր աշակերտ պետք է հստակ ցույց տա իր ներդրումը նախագծում: Խմբային աշխատանքի դեպքում հատկապես կարևոր է ուսուցչի դերը[5]: Ծրագրի յուրաքանչյուր մասնակից ստանում է անհատական գնահատական: Ծրագրի արդյունքները պարտադիր պետք է ներկայացվեն այս կամ այն ձևով:

Ներկայացնում են նախագծային աշխատանքի իրականացման տեխնոլոգիական հերթականությունը:

Աշխատանքի բովանդակությունը և փալերը	Գործունեությունը	
	ուսուցիչ	Աշակերտ
Նախապատրաստում	Որոշում է թեմաների ցանկը, նախագծի նպատակը: Ուսումնառողներին ծանոթացնում է նախագծային մոտեցմանբովանդակության մասին,աշխատանքների տեսակները, դրանց արդյունքները և գնահատման չափանիշները:	
Փուլ 1 Պրոբլեմ	Ուսուցիչը ներկայացնում է նախագծի թեման, առաջարկում է նախագծիհիմնական պրոբլեմը, ձևակերպում նպատակներն ու խնդիրները:	Միավորվում են խմբերով, քննարկում և ընդունում նախագծի թեման: Աշակերտները իրականացնում են պրոբլեմի ընկալումը, կոնկրետացնում նպատակներն ու խնդիրները: Անհրաժեշտության դեպքում ստանում է լրացուցիչ տեղեկատվություն: Քննարկում նախագծի վրաաշխատանքի սպասվող արդյունքները:

Փուլ 2 Պլանավորում	Ուսուցիչը կազմակերպում է նախագծի գործունեությունը, առաջարկում է կազմավորել խմբեր,բաշխել աշակերտների դերերը խմբերում,պլանավորել նախագծի գործունեությունը և պրեզենտացիայի հնարավոր ձևերը։	Աշակերտները իրականացնում են խմբերիբաժանումը, բաշխում են դերերը խմբում, պլանավոյաւմ աշխատանքը, ընտրում արդյունքները ներկայացնելու ձևերն ու եղանակները։
Փուլ 3 Պրպտում	Ուսուցիչը տեղեկատվության որոնման գործին չի մասնակցում։ Նա խորհրդատվություն է տրամադրում, հսկում է խմբերի աշխատանքը,տալիս նոր գիտելիք,կատարում պրեզենտացիայի փորձեր։	Աշակերտներն աշխատումեն ինքնուրույն, ակտիվ, յուրաքանչյուրն իր դերով, խրհրդակցում են իրար հետ, որոնում ն նախապատրաստում են նյութեր պրեզենտացիայի համար։

Փուլ 4 Պատրաստում	Ուսուցիչը կատարում է դիտարկումներ, անհրաժեշտության դեպքում աշակերտներինխորհուրդներ է տալիս, նախապատրաստում է նախագծի պաշտպանությանը:	Աշակերտները կատարումեն հետազոտություններ, վերլուծում են տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, շտկումներ են անում,պատրաստվում պաշտպանությանը:
Փուլ 5 Պաշտպանություն	Ուսուցիչը լսում է աշակերտներին, գնահատում է խմբերի աշխատանքը:	Աշակերտները ներկայացնում ենուսումնական նախագիծը, կատարում ինքնագնահատում:

ԳԼՈՒԽ 2

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԻՆԱԿ «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Այժմ կոնկրետ օրինակով հասկանանք ուսուցման նախագծային տեխնոլոգիայի կիրառությանը հասարակագիտություն առարկայի որևէ թեմայի շրջանակներում.

Նախագծի վերնագիրը՝ Երիտասարդական կենտրոնների բացակայությունը գյուղական համայնքներում

Նախագծի մասնակիցները ՝ Ավագ դպրոցի աշակերտներ

Նախագծի ժամանակահատվածը ՝ Երկու ամիս

Նախագծի տեսակ ՝ Հետազոտական

Նախագծի նպատակը

- Հիմնավորել երիտասարդական կենտրոնների առկայության անհրաժեշտությունը գյուղական համայնքներում,

Նախագծի խնդիրները

- Կատարել օրենքների ուսումնասիրություն պատասխանատուների շրջանակը պարզելու համար
- Պարզել՝ ըստ օրենքի երեխաների, որ իրավունքներն են ոտնահարվում երիտասարդական կենտրոնների բացակայության դեպքում
- Կազմակերպել զրույց պատասխանատու մարմինների հետ
- Ներկայացնել խնդրի լուծման առաջարկություն/նաև օրենսդրական նախագծիտեսքով/

Նախագծի ընթացքը

1. Հիմնավորում

- Երիտասարդական կենտրոնների բացակայության առումով առավել խոցելի են այն համայնքները, որոնք հեռավոր են, սահմանամերձ, բարձր

լեռնային կամ ունեն 500-ից պակաս բնակչություն:

- Երիտասարդական կենտրոնների բացակայությունը գյուղական համայնքներում խոսում է գյուղ-քաղաք զարգացման անհամաչափության մասին և խախտում երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի մի շարք դրույթներ:
- Օրինակ՝ ըստ կոնվենցիայի 31-րդ հոդվածի_ Յուրաքանչյուր երեխա ունի խաղալու, մշակութային կյանքի /տարբեր ցուցահանդեսների, համերգների, ներկայացումների, այլ միջոցառումների/ ազատ մասնակցելու և հանգստի իրավունք

2. Խնդրի իրավական կարգավորումը

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին
- Երեխայի իրավունքների մասինկոնվենցիա

3. Պատկան մարմիններ

- Տարածքային կառավարում և ՏԻՄ
- Կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

4. Առաջարկվող քաղաքականությունը

- Վերահսկողության տակ պահել համայնքների բյուջեի կատարողականությունը ոչ միայն թղթի վրա այլ նաև փաստացի
- Խոշորացված համայնքների կազմում ընդգրկված այն բնակավայրերը, որոնք հեռավոր են, սահմանամերձ, բարձր լեռնային կամ ունեն 500-ից պակաս բնակչության թիվ, սահմանել հստակ ներդրումների չափ կախված ընդհանուր համայնքի բյուջեից:
- Ձեռնարկությունների և ընկերություններին մաքսային, կամ այլ արտոնությունների դիմաց պարտավորեցնել որևէ հեռավոր, սահմանամերձ, բարձր լեռնային կամ 500-ից պակաս բնակչություն

ունեցող համայնքներում կատարել ներդրումներ՝ ուղղված հիմնախնդրի լուծմանը:

5. Գործողությունների պլան ժամանակացույց

I. Ուսուցիչը ներկայացնում է նախագծի թեման առաջարկում է նախագծիհիմնական պրոբլեմը, իսկ աշակերտներն էլ

II. Աշակերտները իրականացնում են խմբերի բաժանումը, բաշխում են դերերը խմբում, պլանավոյաւմ աշխատանքը, ընտրում արդյունքներըներկայացնելու ձևերն ու եղանակները:

III. Աշակերտներն աշխատում են ինքնուրույն, ակտիվ, յուրաքանչյուրն իր դերով, խրհրդակցում են իրար հետ, որոնում ն նախապատրաստում են տեղեկատվությունը՝ կատարելով ստորև ներկայացված աշխատանքները:

- Համայնքում անցկացնել հարցազրույց և փորձել գտնել խնդրի լուծման ուղիները:
- Դիմել համայնքի վարչական ղեկավարին:
- Հանդիպել խոշորացված համայնքի ավագանու անդամների և համայնքի ղեկավարի հետ՝ ներկայացնելով խնդիրը:
- Հանդիպել մեր տարածաշրջանի պատգամավորներին և խնդրել օրենսդրական նախագիծ ներկայացնել ԱԺ-ում նման խնդիրների լուծմանը իրավականկարգավորում տալու:

IV. Այս աշխատանքները կատարելուց հետո աշակերտները կատարում են հավաքած տեղեկությունների վերլուծում և աշխատում նախագծի վրա,շտկումներ են անում, պատրաստվում պաշտպանությանը:

6. Ակնկալվող արդյունքը

Արդյունքում պետությունը առաջիկա 5 տարիների ընթացքում կկարողանա առնվազն 30%-ով լուծել գյուղական համայնքներում

երիտասարդական կենտրոնների բացակայության հիմնախնդիրը:

Ամփոփում

V. Աշակերտները հետազոտության իրականացման վերջնարդյունքում ստեղծում են պաստառ, սահիկաշար և մինչև 5 րոպեանոց տեսաֆիլմ, որտեղ հակիրճ ներկայացնում են իրենց կողմից իրականացված հետազոտության յուրաքանչյուր փուլի մասին:

Այս փոքրիկ օրինակից պարզ է դառնում, որ հասարակագիտությունը յուրահատուկ գիտություն է. Ի տարբերություն բազմաթիվ այլ գիտությունների՝ հասարակագիտությունը չի տալիս պատրաստի պատասխաններ: Այն տալիս է մտածելու ձևեր և մոտեցումներ, որոնք կիրառելով ու քննադատաբար յուրացնելով կարո ենք կառուցել անձի արժեքային համակարգն ու աշխարհայացքը:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերելու մարդու մտածողության մասին և դրա շնորհիվ յուրացրած հմտությունները կիրառելու որոշակի իրավիճակներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով հասարակական կյանքում անընդհատ տեղի ունեցող տարաբնույթ գործընթացները և փոփոխությունները, աշխատանքում կարևորվել է «Հասարակագիտություն» առարկայի դասընթացում ուսուցման նախագծային տեխնոլոգիայի կիրառությունը:

Հանրակրթության բովանդակության կառուցվածքային բաղադրիչների ամբողջական ու ներդաշնակ գործածությունը ուսումնական հաստատություններում համապատասխան կրթական տեխնոլոգիաների միջոցով ենթադրում է ուսուցման արդյունավետության բարձր մակարդակ, ինչին էլ նպատակաուղղված է վերջին երկու տասնամյակներում կրթական բարեփոխումների քաղաքականությունը: Այսպիսով, հասարակագիտություն առարկայի այն թեմաները, որոնց ուսուցման անհրաժեշտությունը առաջ է գալիս հասարակության զարգացման և տարբեր տիպի տեղաշարժերի արդյունքում, կարելի է հասանելի դարձնել սովորողներին, նրանց մղել ինքնուրույն հետազոտական աշխատանքների ինչպես դասի ընթացքում, այնպես էլ արտադասարանային և արտադպրոցական տարբեր տիպի միջոցառումների ժամանակ:

Հասարակությունների զարգացման մակարդակը մեծապես կախված է այն հանգամանքից, թե ինչպիսի անձնային որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են առաջնորդվում ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջով: Այս առումով կարևոր են անձի հուզական հասունությունը և ինքնաճանաչողության, ինքնագնահատման բարձր մակարդակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյսսն Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005:
2. Палат Е. С., Новые педагогические и информационные технологии в системеобразования, Москва, 1999:
3. ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788, (մուտք՝ 15.10. 2022):
4. «Հասարակագիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (7-12 դասարաններ) 8b2822312f24a01c87db9c7d9ff24ad2.pdf (escs.am) (մուտք՝ 19.10. 2022: